ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ Աշխարհագրության ուսուցման նորագույն մեթոդները և դրանց կիրառման հնարավորությունները

ԿԱԶՄԵՑ՝ Շուշանիկ Մուրադյան

Կապանի թիվ 12 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Մ.Մարտիրոսյան

«Կապանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Կապան 2023

Բովանդակություն

1. Ներածություն _____3-4

2. Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա _____5-7

3. Աշխարհագրության ուսուցման մեթոդների դասակարգումը _____8-12

4. Եզրակացություն _____13

5. Գրականության ցանկ _____15

6. Հավելված 1 _____16-17

Ներածություն

<<Մանկավարժական տեխնալոգիան մանկավարժի արվեստն է, նրա հմտությունը, որը թույլ է տալիս նրան փոխել իրավիճակը և դրությունը>>: Վ.Մ.Շեպելը

Աշխարհագրությունը գիտություն է բնության, մարդկության և դրանց հետ կապված օրինաչափությունների մասին: Աշխարհագրությունը նախկինում հայտնաբերող և նկարագրող գիտություն էր և այն անցնելով զարգացման երկար ճանապարհ դարձել է կառուցողական և բացատրողական գիտություն: Աշխարհագրության ուսումնասիրության ոլորտը երկիր մոլորակն է, իսկ առարկան՝ երկրագնդի աշխարհագրական թաղանթը: Աշխարհագության բնորոշ գծերից մեկն է աշխարհագրական կանխատեսումներ անելը: Օրինակ՝ կանխատեսել, թէ ինչ եղանակ է սպասվում: Աշխարհագրությունը աշխարհի իմացության հիմքն է:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ ասես ամեն ինչ փոխվում է ակնթարթորեն:

Կրթական բարեփոխումներն անխուսափելիորեն առաջ են բերում ուսուցչի ստանձնած դերի փոփոխություն: Այդ փոփոխության գործոնները բազմաթիվ են և, ի վերջո, պայմանավորված են նրանով,որ հասարակական արմատական վերափոխումների հետևանքով որակապես փոխվել է սերունդը՝ նրա մտածողությունը, ձգտումներն ու սպասելիքները, և, ուրեմն, փոխվել են նաև կրթական խնդիրները, դրանց իրականացման պայմանները:Աշակերտը սովորում է ապրելով ու վերապրելով դասի ամբողջ ընթացքը, նրա համար հաճախ ավելի մեծ կարեվորություն ունի ուսուցչի կողմից իրեն գիտելիք մատուցելու ձևը, ուսուցման գործընթացում իր ընդգրկվածության եղանակը, քան բուն գիտելիքն ինքնին: Ինչ: Ինչու: Ինչպես: Յուրաքանչյուր ուսուցիչ մինչև դասարան մտնելն ինքն իրեն հարց է տալիս, թե որն է դասի նպատակը և ինչ պետք է սովորեցնի նա աշակերտին:

Շատ ժամանակ խոսվում են ԽՍՀՄ կրթական համակարգի արդյունավետության մասին, բոլոր նրանք ովքեր ծանոթ են այդ համակրգին գովեստի խոսքեր են ասում, բայց այն արդյունավետ էր այդ ժամանակ և այդ մեթոդներով ներկայումս դասավադելը այդքան էլ արդյունավետ չէ: Պետք է կարողանալ հնի ու նորի համադրմամբ ստեղծել ժամանակակից դասավանդման մեթոդ:[1] Մենք այժն ապրում ենք տեխնալոգիաներով հարուստ ժամանակաշրջանում, և այն, գնալով ավելի է

[1] Ավագյան Գ.Ե.«Մատենագիտություն»,1959 N 8

զարգանում: Ժամանակակից տեխնալոգիաները պետք է կիրառել դպրոցում, դասավանդման մեթոդիկայում: Զարգացող տեխնալոգիաները սահմանում են նոր պահանջներ: Ժամանակակից տեխնալոգիաների կիրառմամբ պետք է հասնել կրթական համակարգի զարգացմանը: Ողջ աշխարհում այժմ ցանկանում են հասնել որակյալ կրթական համակարգի ստեղծմանը՝նոր, տեխնալոգիապես հարուստ դասավանդման մեթոդիկայի:

Նպատակին հասնելու համար պետք է

1. Ուսումնասիրել ժամանակակից տեխնալոգիաները և նորագույն մեթոդները
2. Համադրել հին ու նոր մանկավարժական դասավանդման մեթոդիկան / կազմակերպել արշավներ, ինչու չէ, նաև դաս բության գրկում, ինչպես անում էին հույն փիլիսոփաները/
3. Մանկավարժական մեթոդիական և տեխնալոգիայի կիրառմամբ գրավիչ դարձնել դասաժամը

Այս հետազոտական աշխատանքի նպատակը աշխարհագրության, և ոչ միայն, դասավանդման մեջ նորագուն տեխնալոգիաների կիրառմաբ և մեթոդների կիրառմամբ հասնել հաջողության, որն իր հերթին կառաջացնի սովորելու ցանկություն:

Այստեղ տեղին է մեջբերել ***Սախումլինսկու*** խոսքերը ***<<Կա հաջողություն, կա սովորելու ցանկություն>>:***

ԳԼՈՒԽ 1

1.1 Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա

Դպրոցում հաջողության բացակայությունը ոչ թե աշակերտի վատ ընդունակությունների, այլ ուսուցչի կողմից կիրառվող ոչ արդյունավետ մեթոդների կիառումն է: Մեթոդը նպատակին հասնելու եղանակ է: Այստեղ տեղին է մեջբերել ***Նիկոլո Մաքիավելիի խոսքերը <<Նպատակը արդարացնում է միջոցները>>:***

Դասավանդման ժամանակ ընտրված ուսուցման մեթոդը պետք է հանգեցնի նպատակի իրականացմանը, որին պետք է հասնել ուսուցիչ-աշակերտ փոխկապակցված աշխատանքով: Ուսուցիչը, մտնելով դպրոց, պետք է ունենա գործնական կարողունակություն, կարողանա աշակերտների հետ կազմակերպել հետազոտություններ, կատարի դիտարկումներ:

Ներկայիս հանրակրթական դպրոցի պահանջներն են՝

1. Հետազոտական աշխատանք
2. Լաբորատոր փորձեր
3. Նախագծային աշխատանք

Դասավանդման ժամանակ հաճախ պետք է կատարել գործնական աշխատանք, քանի որ նյութի մատուցումը առանց գործնական աշխատանքի թերի է: Դասավանդման այսպիսի մեթոդով երկու գործողություններ մեկտեղելով նախ առաջացնում ենք հետաքրքրություն աշակերտների մեջ, ապա աշակերտը դասարանում բացատրված դասը կարողանում է կիրառել գործնականում: Դասավանդման միջոցով նախ աշակերտները ստանում են լիարժեք տեղեկատվություն, ուստի ուսուցչի նպատակը պետք է լինի հասնել նրան, որ այդ տեղեկատվությունը կարողանա կիրառել գործնականում:

ՆՊԱՏԱԿ

↓

Կլիմայի ընդհանուր բնութագիր

↙ ↘

նյութի մատուցում → ծանոթացնել գործիքներին և օգտագործման ձևերին

գործնական աշխատանք → իրականացնել հետազոտություններ

↘ ↙

ԱՐԴՅՈՒՆՔ

Դիդակտիկայում կրթության նպատակ է համարվում հասարակության կողմից ընդունված

արժեքային համակարգի ձևավորումն ու դրա արտացոլումը աշակերտի գիտակցության մեջ: Աշխարհագրական կրթության բովանդակությունը աշխարհագրական գիտելիքների, կարողությունների և հմտությունների, աշխարհայացքի, գաղափարաբարոյական արժեքների, իմացական և ստեղծագործական փորձի ամբողջությունն է: Աճող սերնդի համար արժեք պետք է համարվեն բնությունն ու մշակույթը, իրազեկությունն ու մտավոր ակտիվությունը, մարդու արժանապատվությունն ու առողջությունը: Կրթությունն ապահովող կարևոր հիմնարկներից է ‹›դպրոցը, այն կրթադաստիարակչական հաստատություն է: Դպրոցը կոչված է պատրաստել մարդուն ինքնուրույն կյանքի, զինել գիտելիքներով, սովորեցնել նրան ճիշտ վարվելակերպ հասարակական և բնական միջավայրում, զարգացնել նրա մոտ ինքնակրթության և ինքնազարգացման ձգտումը:

Ներկայիս փոփոխությունները ցույց են տալիս որ, եթե ցանկանում ենք ունենալ որակյալ կրթություն չպետք է բավարարվել միայն տեսական գիտելիքներով: Այսօր դպրոցում աշխարհագրության ուսուցման ողջ գործնթացը գնում է դեպի սովորողի գործնական կարողությունների ձևավորմանը, աշակերտներին պատրաստել սոցիալական կյանքին: Եթե ուսուցիչը ճիշտ մեթոդաբանությամբ մոտենա տեսական և գործնական կարողությունների ձևավորմանը, ապա մենք բազմակողմանի կներկայացնենք աշխարհագրական գիտելիքը աշակերտին:

Այսպիսով «ուսուցման մեթոդ» հասկացության բնորոշ հատկանիշներն են՝ նպատակը, որը որոշվում է ուսուցչի և աշակերտի գործողությունների համակարգը (օր՝ աշխարհագրական պատկերացման ձևավորում), միջոցները, որոնց օգնությամբ իրագործվում է նպատակը (օր՝ սահիկաշարի պատրաստում,նկարների ցուցադրում), և օբյեկտը, որին ուղղված է գործողությունների համակարգը (օր՝ գիտելիք լեռնաշղթայի վերաբերյալ): Ուսուցման մեթոդի ձևակերպման մեջ առանձնացվում է երկու կողմ՝ արտաքին (օբյեկտային) և ներքին (սուբյեկտային): Արտաքին կողմը (օբյեկտային ասպեկտ) արտահայտվում է ուսուցչի գործողություններում, երբ նա ընտրում է գիտելիքի ձեռքբերման աղբյուրը, որով պետք է կազմակերպի աշակերտների աշխատանքը, որն արտահայտվում է մեթոդների և ուսումնական նյութի բովանդակության կապի մեջ: Օրինակ՝ եթե ուսուցիչը նյութը շարադրում է բանավոր, ապա սովորողների համար գիտելիքների աղբյուրը նրա խոսքն է, իսկ խոսքի արտահայտման ձևը՝ պատմում, զրույց, դասախոսություն և այլն, մեթոդի արտաքին կողմն է: Ներքին կողմը (սուբյեկտային ասպեկտ) աշակերտների կողմից ուսումնական տեղեկության մտավոր վերլուծությունն է, գիտելիքի

տրամաբանական կառուցվածքի գիտակցումն ու իմաստավորումը: Այս գործունեությունը դիտարկելի չէ, քանի որ կատարվում է մտավոր գործողությունների միջոցով: Ուսուցիչը այդ մասին տեղեկանում է միայն արդյունքների ստուգման պահին: Սուբյեկտային ասպեկտը մեծապես կախված է աշակերտի պատրաստվածությունից, ուսուցչի մասնագիտական վարպետությունից ու անձնային որակներից:[2]

[2] ‹‹Մխիթար Գոշ›› գիտամեթոդական հոդվածներ 2019 N 2 էջ 108

Գլուխ 2

2.1 Աշխարհագրության ուսուցման մեթոդների դասակարգումը

Դիդակտիկայում տարբերակում են մեթոդների երեք խոշոր խմբեր՝

1.1. աշակերտների ուսումնական գործունեության խթանման մեթոդներ

1.2. ուսումնաիմացական գործունեության կազմակերպման մեթոդներ

1.3. Ուսումնաիմացական գործունեության արդյունքների վերահսկաման մեթոդներ:

Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում գոյություն ունի և կիրառվում է ուսուցման մեթոդների երկու դասակարգում՝

2.1. ըստ գիտելիքի ստացման աղբյուրի

2.2. ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի, որը պայմանավորված է գիտելիքի յուրացման տարբեր մակարդակներով:



2.2 Աշխարհագրության ուսուցման խոսքային մեթոդները:

Աշխարհագրության ուսուցման մեթոդներից՝ ըստ գիտելիքի ստացման աղբյուրի առավել կարևորվում է խոսքային մեթոդը: Խոսքային մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է խոսքի միջոցով:
Գոյություն ունեն բանավոր և գրավոր խոսքային մեթոդներ: Խոսքային մեթոդների զարգացման գլխավոր հիմնական ուղղությունը դրանց ներուժի առավելագույն օգտագործումն է սովորողների մտավոր գործնեության կազմակերպման համար: Դրան հասնելու համար անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել տրամաբանական գործողությունների եղանակներին՝ վերլուծություն, համադրում, համեմատում, համակարգում, ընդհանրացում: Խոսքային մեթոդներն անհրաժեշտ են որպեսզի աշակերտների մոտ ձևավորվեն հետևյալ կարողությունները՝ կատարել դատողություն, արտահայտել սեփական միտքը, պատմել դիտարկված երևույթների մասին, կիսվել տպավորություններով և այլն:

2.3 Աշխարհագրության ուսուցման դիտազննական մեթոդները:

Դիտազննական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է ցուցադրության միջոցով:
Դիտազննական մեթոդներում գիտելիքների աղբյուրներն են հանդիսանում տարբեր ուսումնական պարագաներ:
Դիտազննական մեթոդների շարքին են պատկանում ուսումնական նկարների, ցուցադրական աղյուսակների, էկրանային պարագաների, ուսուցողական կամ մանկավարժական նկարների, քարտեզների և մոդելների կիրառման մեթոդները:[3] Դիտազննական մեթոդների հիմնական գործառույթը ուսումնասիրվող օբյեկտի կամ երևույթի պատկերավոր կերպարի ստեղծումն է գիտակցության մեջ, աշխարհագրական օբյեկտների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը:
Աշխարհագրության ուսուցման գործընթացում դիտազննական մեթոդները առավել կարևոր են, քանզի հիմնված են զգայական իմացության վրա, իսկ զգայական իմացությունը ժամանակային

[3] Գիտական Տեղեկագիր Գյումրի 2019 N 1ՊՐԱԿ Բ էջ 58

առումով նախորդում է ռացիոնալ իմացությանը: Տվյալ դեպքում դիտազննական մեթոդները հենք են հանդիսանում խոսքային մեթոդների համար:

2.4 Աշխարհագրության ուսուցման գործնական մեթոդները: Գործնական աշխատանքներ:

Այս մեթոդներում գիտելիքների ստացման գլխավոր աղբյուր են հանդիսանում աշխարհագրական իրականությունը ու նրա մոդելները (քարտեզներ, պրոֆիլներ, գրաֆիկներ, մանրակերտեր և այլն):
Ուսուցիչը ձևակերպում է խնդիրը ու կազմակերպում աշակերտի գործունեությունը, որն ուղղված է քարտեզի, նկարի, օբյեկտի հետ նախատեսվող աշխատանքի եղանակների յուրացմանը (օր.՝ ծանոթացնել քարտեզին, որից հետո որոշել ռելիեֆի ձևերը՝ ըստ գունային ֆոնի):
Գործնական մեթոդների էությունն այն է, որ ուսուցչի օգնությամբ աշակերտները սովորեն ձեռք բերել նոր գիտելիք ուսուցման միջոցներից (քարտեզից, ֆիլմերից,տեսասահիկներից):
Գործնական մեթոդների շարքին են պատկանում օբյեկտների ու երևույթների դիտարկումը բնության մեջ, արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում:
Գործնական մեթոդների իրացման հարցում մեծ դեր ունեն գործնական աշխատանքները:
Ուսուցողական գործնական աշխատանքները կատարվում են ուսուցչի ղեկավարությամբ:
Ուսուցիչը բացատրում է գործողությունների հերթականությունը, ցույց է տալիս կատարման օրինակը և հանձնարարում առաջադրանքը, որը ենթադրում է գործողության վերարտադրումն ու մտապահումը(Օր.՝աշխարհագրական կորդինատների,աշխարհագրական լայնությունների որոշում)
Վարժեցնող գործնական աշխատանքները ուղղված են կարողության ամրապնդմանն ու կատարելագործմանը, ինչը կհանգեցնի հմտության ձևավորմանը, այսինքն գործողության ավտոմատացմանը:
Ամփոփիչ գործնական աշխատանքները ուղղված են կարողությունների ու հմտությունների յուրացման որակի ստուգմանն ու դրանց կիրառմանը նոր պայմաններում (օր.՝գտնել A և B կորդինատները քարտեզի վրա,որոշել և չափել դրանց միջև եղած հեռավորությունը):
Գործնական աշխատանքների կիրառումը համարվում է արդյունավետ,երբ սովորողները տիրապետում են ժամանակակից այնպիսի մեթոդների,հնարների, որոնք ընկած են

աշխարհագրական կարողությունների ու հմտությունների հիմքում:

2.5 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ ԸՍՏ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ

Աշխարհագրության ուսուցման մեթոդներից յուրաքանչյուրն ակտիվացնում են աշակերտի մտավոր գործունեության տարբեր տեսակները: Մեթոդներից որևէ մեկի բացակայության դեպքում ուսումնադաստիարակչական գործընթացը կդառնա թերի իրականացված: Ուսուցման մեթոդները սերտ կապված են աշխարագրության բովանդակության,խնդիրների,նպատակի հետ և փոփոխվում են ժամանակի ընթացքում:

Ուսուցման մեթոդները կիրառելիս հաշվի է առնվում աշակերտների իմացական գործունեության բնույթը տարբեր տարիքային խմբերում:

Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում,մեթոդները միավորվում են երկու մեծ խմբերում՝

1. Բացատրացուցադրական մեթոդների խումբ
2. Ստեղծագործական մեթոդների խումբ

Բացատրացուցադրական մեթոդը գիտելիքների փոխանցման ամենադյուրին մեթոդն է: Այս մեթոդի օգնությամբ ուսուցիչը ձևավորում է սովորողների գիտելիքների հիմնական պաշարը, որի հիմքի վրա հետագայում կազմակերպվում են ինքնուրույն աշխատանքները: Ուսուցիչը փոխանցում է գիտելիքը, սովորողները յուրացնում են տեղեկությունը՝ լսում են, կարդում են, դիտում են, մտապահում են, որից հետո պարզ վերարտադրում են ընկալվածը: Բացատրացուցադրական մեթոդը կիրառվում է ոչ միայն տեսական գիտելիքի փոխանցման նպատակով, այլև նրա միջոցով ձևավորվում են աշխարհագրության ուսուցման մեջ կիրառվող բազմաթիվ հնարներ՝ քարտեզի ընթերցում, գծակարգի վերլուծում, աշխարհագրական նկարագրության և բնութագրի կազմում և այլն:

Նոր ժամանակներում աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտների իմացական հետաքրքրասիրության զարգացման նպատակով ակտիվորեն սկսվեց կիրառության մեջ դրվել պրոբլեմային ուսուցման մեթոդը,որի ուսումնասիրմամբ զբաղվել

է Մ.Ի. Մախմուտովը: Պրոբլեմային ուսուցումը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դպրոցական կրթության մեջ և ներառում է մի շարք մեթոդներ՝ պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական:[4]

Ստորև ներկայացնենք վերոհիշյալ պրոբլեմային մեթոդները՝

Պրոբլեմային շարադրանքի մեթոդ: Նպատակն է ցույց տալ աշակերտին իմացության բարդությունը և դրա պարզաբանման ճիշտ ուղին,ապացուցողական լուծման նմուշը:

Մասնակի-որոնողական մեթոդ: Նպատակն է աստիճանաբար մոտեցնել սովորողին ստեղծագործական աշխատանքին:

Հետազոտական մեթոդ: Այս մեթոդը հնարավորություն է տալիս աշակերտներին ինքնուրույն ուսումնասիրել իրենց համար լիովին նոր նյութը:

2.6 ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեթոդի ընտրությունը կախված է ուսումնասիրվող երևույթի էությունից,բնույթից,խնդիրներից,նպատակից,սովորողի իմացական պահանջմունքից,տեխնիկական հնարավորություններից:Յուրաքանչյուր մեթոդ ընտրելիս պետք է հաշվի առնել ուսուցնվող նյութի բովանդակությունը:Աշխարհագրության մեջ կան բազմաբնույթ հասկացություններ,որոնք չեն կարող ձևավորվել նույն մեթոդներով, դրանցից յուրաքանչյուրը պահանջում է ձևավորման ուրույն մեթոդական մոտեցում:

Առանձնացվում են աշխարհագրական բովանդակության գիտելիքների որոշակի խմբեր՝

- աշխարհագրական օբյեկտների կամ երևույթների արտաքին տեսքի մասին՝ սարահարթ,հարթավայր,պասսատներ և այլն:
- տարածության մեջ աշխարհագրական օբյեկտների տեղաբաշխման մասին՝մակրո,միկրո, մեզո:
- հատկությունների վերաբերյալ՝ ջերմակայունություն, ինտենսիվություն,խոնավություն
- երևույթների մասին՝ ցիկլոններ,փոթորիկներ,սողանքներ և այլն,
- աշխարհագրական օբյեկտի կառուցվածքի մասին՝ երկրակեղևի կառուցվածքը
- աշխարհագրական օբյեկտների միջև եղած կապերի մասին՝ հարթավայրներ-

[4] Սարգսյան Խ. Բ «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա» Զանգակ-97, Երևան 2002թ.

հրաբուխ,գետաբերան-կլիմա :

Եզրակացություն

Նորագույն և հետաքրքիր մանկավարժական մեթոդների կիրառմամբ պետք է հասնել նրան, որ աշակերտների մոտ առաջանա նախ սովորելու, արդյունքի հասնելու, ապա հոգատարություն մշակութային արժեքների նկատմամբ: Բաց դասերի արդյունքում աշակերտները լրացուցիչ գիտելիքներ են ստանում նաև այլ առարկաներից, օրինակ՝ հայրենագիտությունից: Աշխարհագրության ուսուցման մեթոդներից յուրաքանչյուրն ակտիվացնում են աշակերտի մտավոր գործունեության տարբեր տեսակները: Մեթոդներից որևէ մեկի բացառումը ուսումնադաստիարակչական գործընթացի անպայմանորեն կհանգեցնի նրա նպատակների և խնդիրների թերի իրականացմանը:

Մի շարք մեթոդների, այդ թվում նաև զննական մեթոդների կիրառմամբ նոր նյութի յուրացման ընթացքում սովորեցնում են աշակերտներին ակտիվացնել, կենտրոնացնել, ընտրել,կիրառել սովորածը: Դրանք օգնում են աշակերտներին հասկանալ, հիշել և կիրառել հիմնական տեղեկություններն ու գաղափարները: Ուսուցիչները հաջողված դասեր են ունենում այն դեպքում, երբ հստակ պատկերացնում են այն կարեվոր տեղեկատվությունը, հասկացություններն ու ունակությունները, որոնք անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մեջ՝ յուրաքանչյուր դասի ուսումնասիրման ժամանակ: Ուստի ուսուցիչները պետք է պարզեն այն ամենակարևոր , անհրաժեշտ գաղափարները, սկզբունքներն ու ունակությունները, որոնք հարկավոր է մտապահել: Նրանք ամենայն մանրամասնությամբ պետք է կառուցեն այնպիսի դասեր, որոնք նպաստելու են յուրացմանը եվ օգնելու են սովորողներին՝ դրանք դարձնել իրենց սեփականությունը:

Գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս.Գ.«Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը»
2. Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013 թ.
3. Սարգսյան Խ. Բ.,Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, «Զանգակ-97», Երևան, 2002 թ.
4. Петрова Е., Теория и методика обучения географии, Томск. 2010 г.
5. Մ. Սուքիասյան «Մանկավարժական տեխնալոգիաների դերն ուսուցման գործնթացում» Երևան ԵՊՀ հրատարակչություն 2016թ.
6. Սարգսյան Խ.« Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա»

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան	7-րդ
Ուսուցիչ (ուհի)	Շուշանիկ Մուրադյան
Առարկա	Աշխարհագրություն
Թեման (օրվա կամ շաբաթվա)	Արդյունաբերության ճյուղերը:
Հետազոտական միավորի թեման	Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն
Հիմնական հասկացություն	Արդյունաբերություն, վառելիքաէներգետիկ արդյունաբերություն, ջէկ, աէկ, ջրէկ, ածխարդյունաբերություն, նավթարդյունաբերություն, գազարդյունաբերություն*:*
Միջառարկայական կապերը թեմայում	Հայոց լեզու-Ընթերցի և ընկալի դասանյութը և թեմային առնչվող այլ տեքստերի նյութերը: Բնագիտություն,կենսաբանություն-Ընթերցի և վերլուծի արդյունաբերության ճյուղային կառուցվածքը:
Ընդհանրական խաչվող հասկացություն	Օրինաչափություն,քարտեզ և մաշտաբ,կայունություն և փոփոխություն
Նպատակ	.Իմանա ինչ է արդյունաբերությունը .Իմանա արդյունաբերության ճյուղային կառուցվածքը : .Իմանա արդրունաբերության զարգացման փուլերը:
Ակնկալվող վերջնարդյունքներ	.Կարողանա վերլուծել և քարտեզի վրա ցույց տալ արդյունահանման ու սպառման շրջանները: .Գնահատի հանքային ռեսուրսների դերը մարդկության կյանքում: Առաջարկություններ կատարի առկա հանքային հումքի և վառելիքաէներգետիկ հիմնախնդրի լուծման

	համար :
Անհրաժեշտ նյութեր	գրքեր, տետրեր, գրիչներ, աշխարհի քաղաքական քարտեզ:
Կիրառվող մեթոդներ	զրույց, մտագրոհ,հարց ու պատասխան, խմբային աշխատանք,ապագայի անիվ, T -աձև աղյուսակ:
Դասի տիպը	Համակցված
Ժամանակ- դասի տևողություն -**45**ր**ոպե**	ԽԻԿ համակարգ
Խթանում 10ր**ոպե**	1.Կազմակերպչական մաս ՝ Տնային առաջադրանքների ստուգում, մատյանի լրացում : 2. Հետաքրքրություն առաջացնել սովորողների մեջ /խթանիչ հարցեր/ ա.Ինչ ենք հասկանում արդյունաբերություն ասելով:
Իմաստի ընկալում 25 ր**ոպե**	Աշակերտները վերհիշեն արդյունաբերության ճյուղային կառուցվածքը և քարտեզագրեն գրատախտակին:Փորձեն պատճառահետևանքային կապ գտնել վառելիքաէներգետիկ արդյունաբերության հիմնախնդրի առաջացման ուղղությամբ և առաջարկեն լուծման ուղիներ:
Կշռադատում 10 ր**ոպե** / Ամփոփում, անդրադարձ/ **Տնային աշխատանք** ----------	Ամփոփել թեման: Հանձնարարել տնայինն առաջադրանք՝Պատմել դասը,առ.՝ լուծել հետևյալ խնդիրը. Որքա՞ն է 3 մլն տ նավթի համարժեք պայմանական վառելիքի քանակը, եթե նավթի ջերմային գործակիցը 1,5 է: